ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1963 Общественные науки

Դ. Հ. Հովհաննիսյան

ԻՐԱՔԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԸ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Իրաքի հեղափոխության շրջանի պատմության հիմնական բովանդակությունը պայքարն է օտարերկրյա իմպերիալիզմի և ներքին ռեակցիոն ֆեոդալական-թագավորական կլիկի դեմ՝ հանուն երկրի իսկական անկախության և դեմոկրատական բարեփոխումների։ Այդ պայքարում միավորվել էին Իրաքի աշխատավորական լայն զանգվածները—բանվորները, գյուղացիները և առաջադեմ մտավորականությունը, ինչպես նաև ազգային (հակաիմպերիալիստական) բուրժուազիան։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ազգային-ազատագրական պայքարը, ինչպես արաբական մյուս երկրներում, այնպես էլ Իրաքում, նոր թափ է ստանում և մտնում իր զարգացման նոր փուլը։ Դա հետևանք էր, մի կողմից, սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ստեղծման, որը հանդիսանում է գաղութատիրության դեմ պայքարող ուժերի բնական դաշնակիցը, իսկ մյուս կողմից՝ ներքին ընդդիմադիր ուժերի աճման ու հետագա կոնսոլիդացման։

Այս շրջանում Իրաքում ծավալված ազգային-ազատագրական պայքարը հանգեցրեց 1958 թ. հուլիսի 14-ի հեղափոխությանը, որը տապալեց միապետությունը և Իրաքը հռչակեց հանրապետություն։ Դա մի ծանր հարված էր գաղութատիրությանը և իմպերիալիստական ուժերին։

Բնական է, որ պատմաբանները՝ թե՛ սովետական, թե՛ արաբական և թե՛ արևմտյան, մեծ հետաքրքրություն են հանդես բերել Իրաքի հեղափոխության շրջանի կարևոր պրոբլեմների լուսաբանման նկատմամբ։ Գրվել են բազմաթիվ մենագրություններ և աշխատություններ՝ նվիրված Իրաքի սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակին, պատմական կարևոր իրադարձություններին և այլն։

Մեր խնդիրը չէ անդրադառնալ այդ բոլոր հեղինակներին ու նրանց ուսումնասիրություններին։ Սույն հոդվածի նպատակն է քննարկման ենթարկել Իրաքի հեղափոխության շրջանի ազգային-ազատագրական շարժումներին նվիրված արևմտյան և հատկապես անգլիական ու ամերիկյան մի շարք պատմաբանների, ինչպես նաև տնտեսագետների, ուսումնասիրությունները, մերկացնել նրանցում տեղ գտած սխալ մեկնաբանություններն ու փաստերի նենգափոխումը և ցույց տալ ժամանակակից բուրժուական պատմագրության անանկությունը դեմոկրատական շարժումների և աշխատավորական զանգվածների հեղափոխական ելույթների լուսաբանման, և առավել ևս, գնահատման գործում։

Ինչպես ցույց է տալիս Իրաքի հեղափոխության պատմությանը նվիրված բուրժուական հեղինակների աշխատությունների ուսումնասիրությունը,

այդ հեղինակները հարցերին միանման մոտեցում հանդես չեն բերում։ Նրանցից ոմանք միտումնավոր կերպով, միանգամայն գիտակցաբար կեղծում են փաստերը, գովաբանում իմպերիալիզմի կատարած գերը Իրաքում՝ լռության մատնելով աշխատավորական զանգվածների և հատկապես բանվոր դասակարգի ու նրա մարքս-լենինյան պարտիայի պայքարը իմպերիալիզմի ու ներքին ռեակցիոն ուժերի դեմ և այլն։

Իսկ բուրժուական պատմաբանների մի խումբ ձգտում է քիչ թե շատ օբյեկտիվորեն լուսաբանել հարցերը, խորամուխ լինել պրոբլեմների մեջ, թեև այդ բանը նրանց չի հաջողվում՝ ոչ գիտական աշխարհայացքի և հակագիտական կոնցեպցիաների պատճառով։ Դրա հետևանքով, թե՝ առաջին և թե՝ երկրորդ խմբին պատկանող հեղինակները սխալ կերպով են լուսաբանում փաստերը և խեղաթյուրում ազգային-ազատագրական շարժման պատկերը։

Կանգ առնենք Իրաքի հետպատերազմյան շրջանի ազգային-ազատագրական շարժման մի քանի կարևոր հարցերի վրա, որոնք սխալ ու խեղաթյուրված լուսաբանում են գտել անգլիական և ամերիկյան մի շարք պատմաբանների ու տնտեսագետների աշխատություններում։

Ինչպես Ասիայի մյուս երկրներում, այնպես էլ Իրաքում, ազգային-ազատագրական շարժումներն իրենց սուր ծայրով ուղղված են օտարերկրյա իմպերիալիզմի դեմ։ Իրաքի բոլոր առաջադեմ ուժերը Երկրի իսկական անկախության նվաճման, էկոնոմիկայի զարգացման, աշխատավորների վիճակի բարելավման և դեմոկրատական ռեֆորմների անցկացման հարցերն իրավացիորեն կապում էին հակաիմպերիալիստական պայքարի, օտարերկրյա կապիտալի տիրապետությունից ազատագրվելու հետ։

«Ազատագրված ժողովուրդները,—գրում է արաբ պրոգրեսիվ գործիչ Ալիզ ալ-Հաջը,—իրենց գլխավոր հարվածներն ուղղում են իմպերիալիզմի դեմ, որպես իրենց վերածնունդի և առաջադիմության գլխավոր և ամենաուժեղ արգելքի»[1]։

Իրաքում տիրապետող էր հանդիսանում բրիտանական իմպերիալիզմը։ Սակայն անգլիական կապիտալի հետ միասին երկրի ազգային հարստությունը թալանում էր ամերիկյան, ֆրանսիական և հոլանդական կապիտալը։ Իրաքում իմպերիալիզմի տեղի և դերի հարցի ճիշտ պարզաբանումը ունի գիտական կարևոր նշանակություն։

Իսկ ի՞նչպես է ազգային-ազատագրական շարժման այդ կարևոր հարցը լուսաբանվում բուրժուական հեղինակների աշխատություններում։

Պետք է նշել, որ նրանց մեծ մասը բավական հանգամանորեն նկարագրում է Իրաքի տնտեսական հետամնաց վիճակը, կյանքի ծանր պայմանները, աշխատավորական մասսաների նյութական վատթար դրությունը և այլն։ Իրաքի տնտեսական հետամնացությունը և աշխատավորների թշվառ վիճակը մի այնպիսի փաստ է, որ ընդհանրապես բուրժուական պատմաբաններն ու տնտեսագետներն ի վիճակի չեն ժխտելու։ Սակայն, փորձելով բացատրել դրա պատճառները, նրանք հարցին մոտենում են միակողմանիորեն, ձգտում են ամբողջ մեղքը զցել, այսպես կոչված, ներքին պատճառների, կառավարման սիստեմի և նույնիսկ առանձին պետական գործիչների վրա, լռության մատնելով իմպերիալիզմի տիրապետության փաստն իսկ։ Այսպես, օրինակ, անգլիա-

[1] عزيز الحاج، القومية و الدمقراطية—بغداد، ص ١٥

կան տնտեսագետ Դ. Ուորինները իր «Ագրարային ռեֆորմները Մերձավոր և միջին արևելքի երկրներում» աշխատության մեջ նշում է, որ Իրաքի «ազգարնակչությունը մեծ չէ և ապրում է աղքատության մեջ, որովհետև Իրաքի բնակիչներն անցյալում չեն կարողացել տիրապետել բնությանը, իսկ բնական պայմանները հնարավոր չի եղել դնել մարդու հսկողության տակ, որովհետև կապիտալը չէր բավականացնում»[2]։ Սա միամիտ բացատրություն է։ Սոցիալական կարևոր կնճիռները նա փորձում է բացատրել աշխարհագրական գործոններով։ Դեռ ավելին, նա լրիվ անտեսում է օտարերկրյա և հատկապես անգլիական կապիտալի տիրապետությունը։ Ինչո՞ւ Իրաքում չկային կապիտալներ, մի՞թե Իրաքն աղքատ էր բնական հարստություններով և չուներ անհրաժեշտ ռեսուրսներ իր տնտեսությունը զարգացնելու և բնակչության կենսամակարդակը բարձրացնելու համար։ Իհարկե, ոչ։ Հարցի ամբողջ էությունը կայանում է նրանում, որ Իրաքի բոլոր կարևոր ռեսուրսները և գլխավոր ազգային հարստությունը՝ նավթը գտնվում էին օտարերկրյա կապիտալիստների ձեռքում, որոնք և ստանում էին եկամուտների առյուծի բաժինը։ Իրաքը զրկված էր այդ եկամուտներն իր տնտեսության զարգացման վրա ծախսելու հնարավորությունից։ Բացի այդ, բրիտանական իմպերիալիզմն իր տիրապետության, համարյա 40 տարիների, ընթացքում ստեղծել էր կառավարական այնպիսի ռեժիմ, որը, ինչպես նշված է «Իրաքի ռեսպուբլիկան» գրքում, վարում էր մի ահավոր քաղաքականություն՝ ուղղակի վնասակար ժողովրդի շահերին և նպաստավոր իմպերիալիզմի շահերին[3]։ Այս է իրողությունը, որն իր գրքում Դ. Ուորինները զանց է առել։

Հարցին նման մոտեցում է հանդես բերում նաև Դ. Ադամսը։ Վերջինս իր «Իրաքի ժողովուրդը և ռեսուրսները» վերնագրով աշխատության մեջ քննության առնելով Իրաքի տնտեսական հետամնացության հարցը, որպես պատճառ նշում է այն հանգամանքը, որ Իրաքում կապիտալ ներդրումների համար նորմալ պայմաններ չկան, որ եկամուտների չափազանց ցածր տոկոսները չեն հրապուրում նրանց, ովքեր ունեն դրամական կուտակումներ, իսկ հասարակ մարդիկ, որոնք ծանոթ չեն բանկային սիստեմին և անվստահությամբ են վերաբերվում կառավարությանը, գերադասում են իրենց դրամը պահել թանկարժեք մետաղների՝ ոսկու և արծաթի ձևով[4]։ Իրաքում, իսկապես, ազգային կապիտալի համար նպաստավոր պայմաններ չկային տնտեսության զանազան ճյուղերում ներդնելու համար։ Այդ հարցում Դ. Ադամսը ճիշտ է։ Սակայն նա չի բացել և կամ թերևս չի ցանկացել բացել փակագծերը և ցույց տալ դրա իսկական պատճառները։ Նա փորձում է հարցը խճողել, առաջ քաշելով Իրաքում բանկային սիստեմի հետ անծանոթ լինելու հարցը։ Դա, անշուշտ, որոշ չափով իր դերը խաղացել է։ Սակայն գլխավոր պատճառը այդ չէ։ Իրաքի ազգային կապիտալի համար ներդրման ոլորտ չգտնելու գլխավոր պատճառն այն էր, որ Իրաքի էկոնոմիկայում և շուկայում անրաժան կերպով տիրապետում էր օտարերկրյա կապիտալը։ Իրաքի տնտեսագետ ու քաղաքական գործիչ Ալի Զարքան իր «Իրաքի ազգային տնտեսությունը» աշխատության մեջ միանգա-

[2] Д. Уоринер, Земельные реформы в странах Ближнего и Среднего Востока (Египет, Сирия, Ирак), пер. с английского, Изд. ин. лит., М., 1958, стр. 175 (այսուհետև Д. Уоринер...).

[3] „The republic of Iraq", Baghdad, 1958, p. 6."

[4] D. Adams, Iraq's People and Resources, Los Angeles, 1958, p. 122.

մայն ճիշտ կերպով նշում է, որ մոնոպոլիստական պետությունները և միությունները արգելակում էին Իրաքի տնտեսության և առևտրի զարգացմանը, նրա համար փակում էին մուտքը համաշխարհային շուկաները և թելադրում գները[5]։ Իրաքի ազգային կապիտալը չէր կարող մրցել օտարերկրյա կապիտալի հետ, մանավանդ, որ նա չէր վայելում իր կառավարության պաշտպանությունն ու աջակցությունը։ Ուստի բնական է, որ իրաքցի մեծահարուստների մի մասը խուսափում էր իր դրամական կարողությունը ներդնել արդյունաբերական գործառնության ոլորտը։ Սրանում է կայանում ճշմարտությունը։

Սխալ «տեսակետ» է պաշտպանում նաև Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ռ. Էմերսոնը։ Նա նշում է, որ երկրում ռեֆորմների իրականացմանը խանգարում էին տիրապետող խմբերը, որոնք ձգտում էին հավերժացնել իրենց իշխանությունը։ Որ այդ խմբերը ռեֆորմների հանդեպ այդպիսի դիրք էին դրավել, դա անհերքելի փաստ է։ Սակայն ճշմարիտ է նաև այն, որ այդ կառավարող խմբերը վայելում էին օտարերկրյա իմպերիալիստների լրիվ աջակցությունը, հենվում էին նրանց վրա և հնազանդ կերպով կատարում նրանց ցանկությունները։ Իրաքում, ինչպես նաև արաբական մյուս երկրներում, դեմոկրատական բարեփոխումներ կիրառելու անհնարինության համար մեղավոր էին թե՛ իմպերիալիստները և թե՛ տվյալ երկրի տիրապետող ռեակցիոն շրջանները։

Ինչպես տեսնում ենք, բուրժուական հեղինակները անտեսում են այն կապը, որ կար Իրաքի տնտեսական հետամնացության ու դեմոկրատական ազատությունների բացակայության և իմպերիալիզմի միջև։ Իմպերիալիզմի դերի անտեսումը հանդիսանում է ժամանակակից բուրժուական պատմագրության ամենախոցելի կողմերից մեկը։

Էլ չենք խոսում այն մասին, որ վերոհիշյալ, ինչպես նաև մի շարք այլ հեղինակների աշխատություններում ոչ մի խոսք չկա իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի մասին։ Թերթում ենք այդ աշխատությունները և չենք հանդիպում թեկուզ մեկ փաստի, մեկ ժողովրդական ելույթի՝ ուղղված օտարերկրյա իմպերիալիզմի դեմ, թեև Իրաքի հետպատերազմյան շրջանի պատմությունը չափազանց հարուստ է այդպիսի փաստերով։ Եվ դա պատահականություն չէ։ Նրանց այդպես է թելադրում վարվել իմպերիալիզմի դերի վերաբերյալ իրենց կոնցեպցիան։

Եթե բուրժուական հեղինակների այս խումբը անտեսում և «մոռացության» է մատնում իմպերիալիզմի դերը Իրաքի սոցիալ-տնտեսական, քաղաքական և ազգային-ազատագրական շարժումների հարցերը քննարկելիս, ապա մյուս խումբը ուղղակի պաշտպանում է իմպերիալիզմի քաղաքականությունն ու գործունեությունը Իրաքում։ Նրանք իմպերիալիզմին, օտարերկրյա կապիտալին և մոնոպոլիստական միություններին վերագրում են «մարդասիրական» առաքելություն, որ, իբր, նրանց նպատակն է օժանդակել և նպաստել Իրաքի տնտեսական զարգացմանը, և որ Իրաքը բարգավաճման կարող է հասնել միայն օտարերկրյա կապիտալի օգնությամբ։ Այլ կերպ ասած, նրանք հանդես են գալիս իմպերիալիզմի բացահայտ ջատագովների դերում։ Ծագումով արաբ, ամերիկյան պատմաբան Խ. Տոման իր «Դինամիտը Միջին Արևելքում» գրքում

[5] Али Зарка, Национальная экономика Ирака, см. ЦГАОР, СССР, ф. 4459, оп. 2, ед. хр. 1190, л. 13.

[6] R. Emerson, From Empire to Nation, Cambridge, 1960, p. 265.

քննարկելով Իրաքի տնտեսական վիճակը և գտնելով, որ այն վերին աստիճանի ծանր է, գտնում է, որ Իրաքի վիճակը կփոխվեր և նա կդառնար Տեխաս կամ Կալիֆորնիա, եթե «յանկիները իրենց ձեռքերը գնեին նրա վրա»։ Մի շարք հրատարակություններում ուղղակի նշվում է, որ Իրաքը արագ և լայն մասշտաբի ինդուստրացման ոչ մի պատճառ չունի[8]։ Նկատենք, որ սա ասվում է մի երկրի մասին, որի աղգարնակչության 80%-ը զբաղված է գյուղատնտեսության մեջ և որը չունի ժամանակակից ինդուստրիալ արդյունաբերության և ոչ մի ճյուղ։ Նման տեսակետներ արտահայտողների նպատակն է թույլ չտալ, որ Իրաքը ագրարայինից վերածվի ինդուստրիալ երկրի, որովհետև դա իր հետևից անխուսափելիորեն կհանգեցներ այն բանին, որ Իրաքը կդադարեր իմպերիալիստական պետությունների հումքային կցորդ լինելուց, և Անգլիան, ԱՄՆ-ը ու մյուս երկրները կզրկվեին այդ կարևոր շուկայից։ Այդ նույն նպատակն էր հետապնդում նաև ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի կողմից հրատարակված «Իրաք» գրքույկը[9]։ Կեղծ լույսի տակ ներկայացնելով փաստերը, նրա հեղինակները Իրաքի էկոնոմիկայում ամերիկյան կապիտալի դիրքերի ուժեղացումը դիտում են որպես տնտեսական օգնություն Իրաքին։

Իսկ Բոստոնի համալսարանի պրոֆեսոր Վիլյամ Ելը հակառակ պատմական իրողությանը և ակնհայտ փաստերին նշում է, թե Միացյալ Նահանգները համակրում են նացիոնալիզմը և պաշտպանում արաբ ռադիկալների ձգտումը՝ բարձրացնելու ժողովրդի կենսամակարդակը և ռեֆորմներ կիրառել գյուղատնտեսության ու արդյունաբերության բնագավառում[10]։

Օտարերկրյա իմպերիալիզմի դերի գովերգումը ամենացայտուն կերպով երևում է Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր Ջ. Լենցովսկու «Նավթը և դրությունը Միջին Արևելքում» աշխատության մեջ։ Հեղինակը կանգ առնելով Իրաքում և արաբական մյուս երկրներում գործող օտարերկրյա նավթային ընկերությունների գործունեության վրա, ուղղակի նշում է, որ նրանց գործունեությունից արաբական երկրները շահում էին։ Նրանք, նշում է Լենցովսկին, շահում էին թե՛ ֆինանսապես և թե՛ նրանով, որ այդ ընկերություններն օգտագործում էին տեղական աշխատուժը և աշխատանք ապահովում տեղական աղգարնակչության համար[11]։ Այսպիսի գնահատական տալով օտարերկրյա մոնոպոլիստական ընկերությունների գործունեությանը, Լենցովսկին կեղծում է իրականությունը։ Ճշմարտությունը կայանում է նրանում, որ իմպերիալիստները բացահայտորեն թալանում էին Իրաքի այդ կարևոր հարստությունը։ Բավական է նշել, որ մինչև 1952 թ. պայմանագիրը Իրաքը յուրաքանչյուր տոննա նավթի դիմաց ստանում էր մի ողորմելի գումար՝ 4 շիլլինգ, իսկ նավթային ընկերությունները՝ մոտ 10 դոլլար։ 1952 թ. համաձայնագրով, որը կնքվեց աղգային-ազատագրական շարժման ճնշման ներքո (ի դեպ այդ հարցին Լենցովսկին իր աշխատության մեջ հարկ չի համարել անդրադառնալու), սահմանվեց շահույթների բաժանման 50/50-ի սկզբունքը։ «Իրաք պետրոլիում»-ի

[7] Kh. Totah, Dynamite in the Middle East, New York, 1955, p. 85.

[8] „The Middle East, A Survey and Directory of the Countries of the Middle East", London, 1961, p. 128.

[9] „Iraq, Public Services Division, Department of State", Washington, 1957.

[10] W. Yale, The Near East. A Modern History, University of Michigan Press, 1958, p. 431.

[11] G. Lenczowski, Oil and State in the Middle East, New York, 1960, p. 40.

գլխավոր դիրեկտոր Գիբսոնը, որը ղեկավարում էր անգլիական պատվիրակությունը, հայտարարեց, որ, Իրաքի հետ կնքած պայմանագիրը անշուշտ շահավետ է Անգլիային։ Նա միաժամանակ ավելացրեց, որ եթե Իրաքում չլինեին անգլիական զորքեր, ապա այդ համաձայնագիրը կնքել անհնարին կլիներ։ Այստեղ տեղին է հիշել Իրաքի արդարադատության նախկին մինիստր Սեիդ Ալի Մահմուդ ալ-Շեյխ Ալիի հայտարարությունն այդ համաձայնագրի մասին. «Համաձայնագրի ֆրազները,—ասում է նա,—կազմված էին ճարպկորեն, քանի որ դրանք մարդկանց ստիպում էին կարծել, թե Իրաքի բաժինը կազմում է նավթային ընկերությունների շահույթների 50 տոկոսը, մինչդեռ իրականում այդպես չէր»[12]։

1958 թ. հուլիսի 14-ի հեղափոխությունից հետո հրատարակված որոշ նյութեր պարզ դարձրին նավթային ընկերությունների ստացած իրական շահույթները։ Ինչպես նշեց Իրաքի հանրապետության ֆինանսների նախկին մինիստր Մուհամեդ Հաղիդը, Իրաքը այդ ընկերությունների զանազան մեքենայությունների հետևանքով ստացել է շահույթների ոչ թե 50, այլ 30—35 տոկոսը։

Անհերքելի փաստերը գալիս են ապացուցելու, որ Իրաքը նավթային ընկերությունների գործունեությունից չէր շահում, այլ, ընդհակառակը, վերջիններս ուղղակի կողոպտում էին նրան։ Եվ պատահական չէր, որ այդ համաձայնագրի կնքման դեմ Իրաքում եղան բազմաթիվ ցույցեր և ելույթներ։ Երկրի ընդդիմադիր ուժերը պահանջում էին Իրաքում գործող բոլոր օտարերկրյա մոնոպոլիստական ընկերությունների ազգայնացում։ Իր աշխատության մեջ անհրաժեշտություն չգտնելով տեղ հատկացնել այդ հարցին, Լենցովսկին, սակայն, հարկ է համարել բանավեճի մեջ մտնել արաբ այն հեղինակների հետ, որոնք հանդես են գալիս իմպերիալիզմի և օտարերկրյա մոնոպոլիստական միությունների տիրապետության դեմ։ Նա գտնում է, որ արաբական երկրներում լույս տեսած գրքերից շատ քչերը իրենց օբյեկտիվությամբ ու ճշտությամբ կարող են համեմատվել արևմտյան հեղինակների աշխատությունների հետ[13]։ Նա այդպիսի եզրակացության է հանգում այն պատճառով, որ «նավթի վերաբերյալ արաբական գրքերը ունեն խիստ ազգայնական գունավորում»[14]։ Լենցովսկուն դուր չի գալիս այն հանգամանքը, որ արաբ հեղինակներ՝ Յուսուֆ Խաթար Հիլուն, Յուսուֆ Իբրահիմ Յազբեկը, Ադիլ Հուսեյնը, Ռաշիդ ալ-Բարավին և մյուսները, իրենց գրքերում մերկացնում են իմպերիալիստական տերությունների քաղաքականությունը և պահանջում կոնֆիսկացնել կամ ազգայնացնել նավթային ընկերությունները։ Ահա թե ինչու Լենցովսկին այդ հեղինակների աշխատությունները համարում է ոչ օբյեկտիվ։

Այսպիսով, բուրժուական պատմաբանների և տնտեսագետների աշխատությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ հեղինակների մեծ մասը չի բացահայտում իմպերիալիզմի դերը, ուստի և չի անդրադառնում նրա դեմ մղած պայքարին։ Դեռ ավելին. նրանք կանգնած են իմպերիալիզմի և մոնոպոլիստական միությունների շահերի պաշտպանության դիրքերում։ Իսկ դա նշանակում է, որ նրանք փաստորեն դեմ են դուրս գալիս ազգային-ազա-

[12] „The Iraq Times", Baghdad, August 16, 1951.
[13] G. Lenczowski., p. 219.
[14] Նույն տեղում, p. 219.

տագրական շարժումներին, որովհետև, ինչպես նշեցինք, ազգային-ազատագրական պայքարն Իրաքում ուղղված էր առաջին հերթին օտարերկրյա իմպերիալիզմի դեմ և առաջադեմ ուժերը նրա տիրապետությունից ազատագրվելու մեջ էին տեսնում Իրաքի տնտեսական և քաղաքական վերածնունդի նախապայմանը։

Ազգային-ազատագրական շարժման հարցերը քննարկելիս պատմագիտության առջև կանգնած կարևոր խնդիրներից է նրա շարժիչ ուժերի, ժողովրդական զանգվածների դերի բացահայտման և նրանց պայքարի լուսաբանման խնդիրը։ Այս վերին աստիճանի կարևոր հարցի նկատմամբ բուրժուական պատմաբաններն ունեն միտումնավոր և միանգամայն սխալ մոտեցում։ Նրանցից ոմանք պաշտպանում են «սոցիալական վակուումի» տեսությունը և Իրաքում չեն տեսնում այնպիսի ուժեր, որոնք ընդունակ լինեին փոփոխություններ մտցնել իրերի վիճակի մեջ։ Վերևում արդեն նշված Դ. Ուորինները ուղղակի գրում է. «Երկրում (Իրաքում—Ն. Հ.) գոյություն չունի ոչ մի սոցիալական ու քաղաքական ուժ, որը կարողանար մարտահրավեր նետել շեյխերի իշխանությանը»[15]։ Սոցիալական և քաղաքական «վակուումի» տեսակետը պաշտպանում են նաև պրոֆ. Ռ. Էմերսոնը և ուրիշներ։ Դժբախտաբար, այդ վնասակար և ոչ գիտական տեսակետը իր արտացոլումն է գտել նաև արաբական որոշ հեղինակների ուսումնասիրություններում։ Այսպես, օրինակ, Ջաֆար Հայյաթն իր «Իրաքյան գյուղը» գրքում, վառ կերպով պատկերելով գյուղացիների տնտեսական ծանր վիճակը և համընդհանուր աղքատությունը, նշում է, թե Իրաքի հասարակարգում չկան այնպիսի ուժեր, որոնք կարողանային երկրում իրականացնել սոցիալական վերափոխումներ[16]։

Ինչի մասին է վկայում այս տեսակետը։ Արդյո՞ք Իրաքում իսկապես տիրում էր սոցիալական կամ քաղաքական «վակուում» և չկային դասակարգային այնպիսի ուժեր, որոնք ի վիճակի էին երկիրն ազատել օտարերկրյա իմպերիալիզմի կապանքներից և տանել դեմոկրատիայի և առաջընթացի ուղիով։ Իհարկե կային։ Այդ ուժերն էին առաջին հերթին, բանվոր դասակարգը, որի տեսակարար կշիռն ու դերը ազգային-ազատագրական պայքարում մեծ չափով աճեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։ Նա դարձավ այդ պայքարի ամենաակտիվ և ամենավճռական ուժը։ Երկրորդ, Իրաքի ազատագրական պայքարի ակտիվ մասնակիցն էր գյուղացիությունը, որը կազմում էր այդ պայքարի ամենամասսայական ուժը։ Գյուղացիության դերը, որը մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը համեմատաբար թույլ էր, ուժեղացավ հատկապես հետպատերազմյան շրջանում։ Բանվոր դասակարգն ու գյուղացիությունը հանդիսանում էին Իրաքի ազգային-ազատագրական պայքարի հիմնական ուժերը։ Այդ ուժերի բաղկացուցիչ մասն էին կազմում նաև առաջավոր մտավորականությունը, ուսանողությունը, վաճառականները, արհեստավորները, ինչպես նաև ազգային հակաիմպերիալիստական բուրժուազիան։ Հենց այս ուժերն էին (ճիշտ է հետապնդելով տարբեր նպատակներ), որ մարտահրավեր էին նետել օտարերկրյա իմպերիալիզմի տիրապետությանն ու արքունիքի ու շեյխերի ծախու ռեժիմին։ Բավական է նշել, որ միայն հետպատերազմյան շրջանում՝ 1948—1958 թթ. Իրաքում տեղի է ունեցել չորս

[15] Д. Уоринер..., стр. 257.
[16] Дж. Хайят, Иракская деревня, М., 1953, стр. 55.

զինված ապստամբություն, որի ժամանակ տապալվել են իշխող կառավարությունները և շատ «ազգային ղեկավարներ» իրենց կյանքը փրկելու համար փախել են Իրաքի սահմաններից։

Այս փաստերն, անշուշտ, հայտնի են այդ պատմաբաններին։ Սակայն, եթե դա այդպես է, ապա ի՞նչպես բացատրել այն հանգամանքը, որ նրանք ոչ մի սոցիալական ուժ չեն տեսնում, որն ի վիճակի լիներ Իրաքում փոփոխություններ մտցնել և պաշտպանում են «վակուումի տեսությունը»։ Դա պետք է բացատրել մի կողմից այն դերով, որ նրանք հատկացնում են իմպերիալիզմին և օտար կապիտալին, գտնելով, որ Իրաքի հետագա զարգացումը և բարգավաճումը կախված է միմիայն նրանցից, իսկ մյուս կողմից՝ ժողովրդական զանգվածների դերի, նրանց ուժի թերագնահատումով։ Հենց մասսաների ուժին չհավատալով պետք է բացատրել նաև այն հանգամանքը, որ որոշ պատմաբաններ գտնում են, թե միայն բանակն է ժողովրդական ցանկությունների արտահայտիչը[17]։ Բանակի դերի գերագնահատումը, իսկ երբեմն նաև ֆետիշացումը, հաճախ է հանդիպում բուրժուական գրականության մեջ։ Հարկավ. միապետական Իրաքում, ինչպես նաև դիկտատորական կառուցվածք ունեցող երկրներում, բանակի դերն առանձնահատուկ է։ Բայց չնայած այդ հանգամանքին, այդ երկրներում ևս վճռական ուժը շարունակում են մնալ աշխատավորական զանգվածները։ Բանակը իր դերը կարող է խաղալ, եթե նա կապված է ժողովրդի հետ, և նրա շահերն է արտահայտում։ Իսկ եթե նա ժողովրդից կտրված է և գործիք է հանդիսանում տիրող վերնախավի ձեռքին, ապա նա ոչ մի դեպքում չի կարող լինել ժողովրդական ձգտումների արտահայտիչը։ Այդ մասին է վկայում հենց Իրաքի պատմությունը, որը բավական հարուստ է զինվորական հեղաշրջումներով։ Այդ հեղաշրջումների ժամանակ կառավարող այս կամ այն խումբը բանակն օգտագործում էր իր նպատակների համար ժողովրդի դեմ. այդ պատճառով էլ նա չի եղել և չէր կարող լինել այն ուժը, որի մասին խոսում են Ռ. Էմերսոնը և մյուսները։

Իրաքի հետպատերազմյան շրջանի պատմությունը մի ավելորդ անգամ հաստատում է այն հանրահայտ ճշմարտությունը, որ երբեք հաշվից դուրս չի կարելի գցել ժողովրդական զանգվածներին՝ պատմություն կերտողին։ Դրա լավագույն հաստատումը և միաժամանակ «վակուումի» տեսության հերքումն էր 1958 թ. հուլիսի 14-ի հեղափոխությունը, որն Իրաքում տապալեց միապետական կարգերը և երկիրն ազատեց իմպերիալիստական ճնշումից։

Եթե բուրժուական որոշ պատմաբաններ պաշտպանում են «սոցիալական վակուումի» տեսությունը և չեն տեսնում ազգային-ազատագրական պայքարի իսկական ուժերին և իրենց աշխատություններում տեղ չեն հատկացնում այդ պայքարին, ապա մյուսները, անդրադառնալով այդ պայքարին, սխալ գնահատական են տալիս նրան, նվազեցնում են բանվոր դասակարգի դերը Իրաքի ազգային անկախության ու տնտեսական զարգացման համար մղվող պայքարում, իսկ գյուղացիությանն, ընդհանրապես, հաշվից դուրս են գցում։ Այդ բանն առանձնապես ցայտուն կերպով դրսևորվում է Ս. Լոնգրիգի և Ֆ. Ստոքսի «Իրաք» գրքում։ Վերոհիշյալ հեղինակները հետպատերազմյան շրջանում Իրաքում ծավալված ազգային-ազատագրական պայքարը դիտում են ոչ թե որպես ժողովրդական լայն զանգվածների շարժում, այլ որպես խռովություն։

[17] Տե՛ս R. Emerson..., p. 268.

Այսպես, օրինակ, խոսելով 1948 և 1952 թթ. գինված ապստամբությունների՝ Իրաքի հետպատերազմյան շրջանի ամենախոշոր ու ամենամասսայական ելույթների մասին, նրանք այդ ապստամբությունները համարում են ժողովրդական լայն բազայից զուրկ ելույթներ, պարզապես ուսանողական ցույցեր, որոնք, իբր, ընդդիմադիր պարտիաները և հատկապես կոմունիստները օգտագործում և վեր էին ածում հակակառավարական խռովության[18]։

Ազգային-ազատագրական շարժումները որպես խռովություն ներկայացնելու ձգտումը բխում է նախ և առաջ իմպերիալիզմի տիրապետության և նրա շահերը պաշտպանելու ցանկությունից, այն գերից, որ նրանք հատկացնում են իմպերիալիզմին։ Այդ բանում կարելի է համոզվել 1930 թ. անգլո-իրաքյան պայմանագրի օրինակով։ Անգլո-իրաքյան պայմանագիրը Անգլիան փաթաթեց Իրաքի վզին 1930 թ. հունիսի 30-ին։ Դա մի անիրավահավասար պայմանագիր էր, որի օգնությամբ Անգլիան Իրաքին գցեց իրենից կախման մեջ։ Պայմանագրի համաձայն Անգլիան իրավունք էր ստանում Իրաքում պահել իր զորքերը, որոնք կարող էին Իրաքի տերիտորիայով ազատ տեղափոխվել։ Անգլիան Իրաքում ձեռք էր բերում երկու ռազմա-օդային բազա՝ Հաբբանիան և Նայբեն։ Իրաքի բանակը վարժեցնելու էին անգլիական հրահանգիչները։ Իրաքը պայմանավորվում էր արտաքին քաղաքականության բոլոր հարցերում «խորհրդակցել» և իր քայլերը «համաձայնեցնել» Անգլիայի հետ[19]։ Իրաքի ժողովուրդը երբեք չհաշտվեց այդ պայմանագրի գոյության հետ՝ ավելի քան 25 տարի պայքարելով նրա վերացման համար։ Այդ պայքարն ուժեղացավ հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։ Եվ պետք է նշել, որ Իրաքի բոլոր ընդդիմադիր ուժերը՝ ձախ թե աջ, պայմանագրի վերացումն հարցում հանդես էին գալիս միասնականորեն։ Չնայած անգլո-իրաքյան պայմանագրի բացահայտ գաղութատիրական բնույթին, Ս. Լոնգրիգը և Ֆ. Ստոքսը ուղղակի գրում են, որ այդ պայմանագիրը «լրիվ անկախություն էր ապահովում Իրաքին»[20]։ Սա ոչնչով չհիմնավորված, միտումնավոր գնահատական է, որով հեղինակները փաստորեն կեղծում են իրականությունը։ Օբյեկտիվորեն ստացվում է, որ Իրաքի ժողովրդական զանգվածների ավելի քան քսանհինգամյա պայքարն այդ պայմանագրի դեմ ոչ այլ ինչ է, եթե ոչ պայքար այդ անկախության դեմ, հակահայրենասիրական և հակաազգային ելույթ, խռովություն, որը, իհարկե, անհեթեթություն է։

Իմպերիալիզմի գիշատիչ բնույթի քողարկումը, նրա դերի անտեսումը և ազգային-ազատագրական շարժումները որպես դավադրություն կամ խռովություն ներկայացնելը ժամանակակից բուրժուական պատմագրության բնորոշ կողմերից մեկն է։

Իրաքի ազգային-ազատագրական պայքարի շարժիչ ուժի վերաբերյալ միանգամայն սխալ տեսակետ ունի անգլիական պատմաբան Կարակտուսը։ Նա պաշտպանում է այն թեզը, որ «հեղափոխություն կատարողները նրանք են, որոնց կյանքի մակարդակը բարձրանում է և ոչ թե նրանք, ում աղքատությունը լրիվ կերպով դեգրադացիայի է ենթարկում և ճնշում»[21]։ Նման բնորոշումից ստացվում է, որ ժողովրդական զանգվածները (որոնց կյանքի պայ-

[18] S. Longrigg and F. Stoaks, Iraq, London, 1958, pp. 103, 105.
[19] „Дипломатический словарь", т. 1, М., 1960, стр. 86.
[20] S. Longrigg and F. Stoaks..., p. 89.
[21] Caractus. Revolution in Iraq, London, 1959, p. 98.

մաններն Իրաքում հետզհետե վատանում էին), չեն եղել հեղափոխություն կատարողները, այլ ունևոր խավերը, քանի որ հենց նրանց կյանքի մակարդակն էր մինչհեղափոխական Իրաքում անընդհատ բարձրանում։ Սա, իհարկե, անհեթեթություն է։ Ընդհանրապես, Կարակոսի մոտ դասակարգերի, Իրաքի դասակարգային կառուցվածքի հարցում լրիվ խառնաշփոթություն է տիրում։ Նրա տեսակետը ոչ մի քննադատության չի դիմանում և հակասում է ինչպես Իրաքի, այնպես էլ մյուս երկրների ազգային-ազատագրական պայքարի փորձին։

Բուրժուական գրականության մեջ ճիշտ լուսաբանում չի գտել նաև 1958 թ. հուլիսի 14-ի հեղափոխությունը, որի հաղթանակով Իրաքում ավարտվեց ազգային-ազատագրական պայքարի առաջին էտապը։ Դա Իրաքի ողջ ժողովրդի մեծ նվաճումն էր իմպերիալիստական ուժերի դեմ մղած պայքարում, պայքար, որն սկսվել էր դեռևս 1920 թվականից։

Բուրժուական հեղինակների մի մասի համար այդ հեղափոխությունը մեծ անակնկալ էր։ Եվ դրանում զարմանալի ոչինչ չկա։ Նրանց համար, ովքեր պաշտպանում էին «սոցիալական վակուումի» տեսությունը, ովքեր Իրաքի քաղաքական և տնտեսական կյանքում փոփոխություններ մտցնելու ընդունակ ոչ մի ուժ չէին տեսնում, ովքեր չէին հավատում ժողովրդական զանգվածներին, նրանց համար այդ հեղափոխությունը պետք է որ մեծ անակնկալ լիներ։

Այդ տեսակետից հիշատակության արժանի է Ջորջթաունի համալսարանի պրոֆեսոր Հ. Ռ. Շարաբիի «Կառավարությունները և քաղաքականությունը միջին Արևելքում քսաներորդ դարում» աշխատությունը։ Հեղինակն այստեղ կանգ է առնում Իրաքի ներքին կացության և Անգլիայի դերի լուսաբանման հարցի վրա։ Չի կարելի նրա հետ չհամաձայնվել, երբ նա նշում է, որ հաշիմիդների ռեժիմը դարձել էր լրիվ ռեակցիոն և ավտորիտար, որ հաշիմիդները և կառավարող կլիկը խզել էին ամեն մի կապ ժողովրդի հետ։ Հ. Շարիբին մատնանշում է, որ երկրի ներսում ոնբաժան կերպով տիրապետում էր ռեակցիան։ Արգելված էր քաղաքական կուսակցությունների գործունեությունը, փակել էին առաջադիմական մամուլի բերանը, կոմունիզմի դեմ պայքարելու դիմակի տակ բանտերը լցրել էին բոլոր նրանցով, ում կասկածում էին օպոզիցիայի մեջ՝ ուղղված գոյություն ունեցող կարգերի դեմ։ Դրա հետ միասին հեղինակը ցույց է տալիս, որ Իրաքում ուժեղ էր անգլիական աղդեցությունը և որ Անգլիան շահագործում էր Իրաքի ազգային հարստությունը՝ նավթը։ Հ. Շարաբիի աշխատության մեջ կա մի ճշմարտացի դիտողություն ևս։ Դա այն է, որ կառավարող կլիկը, գրում է հեղինակը, անընդունակ գտնվելով ռեֆորմներ կիրառելու և համբերատար լինելու քաղաքական ընդդիմադիր ուժերի նկատմամբ, իր տիրապետության ամրապնդումը տեսնում էր Իրաքը անվերապահորեն արևմտյան լագերին և այդ լագերի ռեգիոնալ ռազմական խմբավորումներին միացնելու մեջ։ Թվում է, թե այսպիսի ճիշտ դիտողություններից հետո հեղինակը ճիշտ կգնահատեր Իրաքում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները, այդ թվում նաև 1958 թ. հուլիսի 14-ի հեղափոխությունը։ Սակայն այդպես չէ։ Նա այնուամենայնիվ գտնում է, որ հուլիսի 14-ի հեղափոխությունը պետական հեղաշրջում էր և անակնկալ էր։ «1958 թ. հուլիսի 14-ի պետական հեղաշրջումի հնարավորությունը,—գրում է Հ. Շարաբին,—բանակին ընձեռվեց, երբ Լիբանանի և Սիրիայի ճգնաժամի ժամանակ Իրաքում զորքի տեղաշարժման հրաման

տրվեց և մի անհայտ սպա, բրիգադիր Աբդել Քերիմ Քասրմը... օգտագործեց իր զորքերը և կատարեց անակնկալ հեղաշրջում»[22]։

Իսկ բուրժուական որոշ պատմաբաններ էլ այդ հեղափոխությունը չեն համարում ժողովրդական հեղափոխություն, այլ դիտում են, ինչպես, օրինակ, վերևում հիշատակված Ս. Լոնդրիգը և Ֆ. Ստոքսը, որպես ռազմական հեղաշրջում կամ զինված դավադրություն։ Դրանում նույնպես զարմանալի ոչինչ չկա։ Այդ հեղինակները, որոնք Իրաքի ազգային-ազատագրական պայքարի 40-ամյա պատմությունը դիտում են որպես խռովություն, չեն կարող հուլիսյան հեղափոխությունը նույնպես չհամարել դավադրություն և կամ խռովություն։

Հուլիսյան հեղափոխությանը նվիրված բուրժուական պատմական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ հեղինակներ այդ հեղափոխության ծագման համար չեն ուզում տեսնել որևէ սոցիալ-տնտեսական պատճառ։ Այդ տեսակետն առավել յայտուն կերպով է դրսևորվել անգլիական պատմաբան Ջ. Մառլոուի «Արաբական նացիոնալիզմը և բրիտանական իմպերիալիզմը» աշխատության մեջ։ Հեղինակն այն կարծիքին է, որ 1958 թ. հուլիսյան հեղափոխությունը, որն ի դեպ, նա նույնպես համարում է պետական հեղաշրջում, պայմանավորված չէր Իրաքի ներքին զարգացմամբ, որ այն արդյունք էր արտաքին ուժերի ներգործության՝ Աբդել Նասերի ինտրիգաների։ «Պետական հեղաշրջման պատճառները,—գրում է Ջ. Մառլոուն,—դեռևս անհայտ են։ Հավանական է, որ պայքարի մեջ ներգրավված սպաներից շատերը, եթե ոչ մեծ մասը, կապի մեջ էին Աբդել Նասերի հետ»[23]։ Ջ. Մառլոուի այս «տեսակետը» ոչ մի կերպ չի համապատասխանում պատմական իրողությանը։ Իրաքյան հեղափոխությունը առանձին անհատի գործունեության արդյունք չէր, այն նախապատրաստվել էր Իրաքի տնտեսական ու քաղաքական զարգացմամբ, իմպերիալիզմի լուծը թոթափելու, երկրի տնտեսական հետամնացությունը հաղթահարելու և բարեփոխումներ մտցնելու, աշխատավորների նյութական պայմանները բարելավելու և երկրում դեմոկրատական ազատություններ հաստատելու անհրաժեշտությունից։ Այս բոլորը միասին ծնեցին 1958 թ. հուլիսի 14-ի հեղափոխությունը, որն իր բնույթով հակաիմպերիալիստական, հակաֆեոդալական և բուրժուա-դեմոկրատական էր։

Այսպիսով, Իրաքի հետպատերազմյան շրջանի պատմությանը նվիրված բուրժուական հեղինակների աշխատությունների քննությունը ցույց է տալիս, որ նրանց մեծ մասը ճիշտ չի ըմբռնում և գնահատում ազգային-ազատագրական պայքարը Իրաքում։ Նրանք անտեսում կամ չեն ցանկանում տեսնել այն ուղիները, որոնք կարող են հասցնել Իրաքի քաղաքական լրիվ անկախությանը և տնտեսական բարգավաճմանը։ Իսկ այդ հեղինակների մի մասը բացահայտորեն հանդես է գալիս օտարերկրյա իմպերիալիզմի շահերի պաշտպանության դերում, կեղծում և խեղաթյուրում է պատմական փաստերը, կարևոր իրադարձությունների իմաստն ու նշանակությունը։

---

[22] Sharabi H. B. Governments and Politics of the Middle East in the Tweuticut Century, New York, 1962, p. 160.

[23] J. Marlow, Arab Nationalism and British Imperialism, London, 1961, p. 173.

Այդ աշխատությունների ուսումնասիրությունը կրկին համոզում է, որ ժամանակակից բուրժուական պատմագրությունը խճողվել է բուրժուադիայի սոցիալական պատվերը կատարելու և նրա շահերի պաշտպանության բավիղներում և անընդունակ է ճիշտ պատասխան տալու ժամանակի հուզող հարցերին։